ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 03/23

30.06.2023թ. ք. Երևան

Գայանե Ճաղարյանի անհատական դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածի և 303-րդ հոդվածի 2-րդ մասի օրենսդրական բացով պայմանավորված դատարանների կողմից տրված մեկնաբանության ՀՀ սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ դիմումի առնչությամբ

1. ԳՈՐԾԻ ՓԱՍՏԵՐԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

11.07.2019թ. «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի (այսուհետ նաև Բանկ) և Ամիդա Գրիշայի Բատիկյանի միջև կնքվել է թիվ OVD1902948 վարկային պայմանագիրը:

11.07.2019թ. Բանկի և Գայանե Ճաղարյանի միջև կնքվել է թիվ G19-037337 գրավի պայմանագիրը, որով հիմնական պայմանագրով վարկառուի կողմից ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովելու համար գրավադրվել է Գայանե Ճաղարյանին սեփականության իրավունքով պատկանող Երևան քաղաքի Նոր Նորք Հ.Գյուրջյան փողոց թիվ 14/3 հողամասը 0,756821 հա մակերեսով:

2022թ. հունիսի 23-ին Գայանե Ճաղարյանի անունից հայցադիմում է ներկայացվել ՀՀ սնանկության դատարան ընդդեմ Բանկի, Ամիդա Գրիշայի Բատիկյանի ի դեմս սնանկության գործով կառավարիչ Արմեն Մաթևոսյանի վարկային պայմանագիրն անվավեր ճանաչելու և որպես հետևանք գրավի պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջների մասին:

2022թ հուլիսի 6-ին ՀՀ սնանկության դատարանը կայացրել է հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշում:

ՀՀ սնանկության դատարանը որոշմամբ նշել է՝ մինչդեռ, պետք է փաստել, որ Գայանե Ճաղարյանը հանդիսանում է գրավատու, այսինքն Գայանե Ճաղարյանը 2019թ. հուլիսի 11-ին Բանկի և Ամիդա Գրիշայի Բատիկյանի միջև կնքված թիվ OVD1902948 վարկային պայմանագրի կողմ չի հանդիսանում, հետևաբար և վերջինիս մոտ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի ուժով չի կարող ծագել փոխառուի կողմից պայմանագիրը վիճարկելու իրավունքը:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը 2022թ. սեպտեմբերի 29-ին կայացրել է որոշում, որով Գայանե Ճաղարյանի վերաքննիչ բողոքը մերժել է և օրինական ուժի մեջ է թողնել ՀՀ սնանկության դատարանի թիվ ՍՆԴ/0075/05/22 սնանկության գործով 2022թ. հուլիսի 6-ի հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշումը:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը որոշմամբ նշել է. «Փոխառության հարաբերությունները կանոնակարգող Քաղաքացիական օրենսգրքի 46-րդ գլխի 882-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն փոխառուն իրավունք ունի վիճարկել փոխառության պայմանագիրը, եթե ապացուցում է, որ ինքը փոխատուից իրականում դրամ կամ այլ գույք չի ստացել կամ ստացել է պայմանագրում նշվածից ավելի պակաս քանակով: Փոխառության պայմանագիրը վիճարկելու իրավասություն օրենսդիրը վերապահել է փոխառուին, իսկ սույն գործով 2019թ. հուլիսի 11-ին «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի և Ավիդա Գրիշայի Բատիկյանի միջև կնքված թիվ OVD1902948 վարկային պայմանագրով բանկը պարտավորվել է փոխառուին Ավիդա Բատիկյանին տրամադրել պայմանագրով նախատեսված գումարը, ուստի թիվ OVD1902948 վարկային պայմանագիրը վիճարկելու պահանջ կարող է ներկայացնել Ավիդա Գրիշայի Բատիկյանը, այնինչ Գայանե Ճաղարյանը հանդիսանում է գրավատու /վարկային պարտավորության պատշաճ կատարումն ապահովող սուբյեկտ/ հետևաբար և թիվ OVD1902948 վարկային պայմանագրի կողմ չի հանդիսանում և վերջինս քաղաքացիական օրենսգրքի ուժով չի կարող փոխառուի փոխարեն վիճարկել այդ պայմանագիրը»:

ՀՀ վճռաբեկ դատարանը 2022թ. դեկտեմբերի 15-ին կայացրել է վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշում, այն հիմնավորմամբ, որ բողոքարկվել է այն դատական ակտը, որը ենթակա չէ վճռաբեկության կարգով բողոքարկման:

Ըստ դիմումատուի իր բողոքների մերժման համար հիմք է հանդիսացել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածը և 303-րդ հոդվածի 2-րդ մասը, որն իր նկատմամբ կիրառվել է նշված նորմի սահմանադրահիրավական, բովանդակությունից չբխող մեկնաբանմամբ, ինչն էլ հանգեցրել է դիմողի ՀՀ սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված հիմնական իրավունքների խախտմանը:

2. ԴԻՄՈՒՄՈՎ ՎԻՃԱՐԿՎՈՂ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԴՐՈՒՅԹԸ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն վիճահարույց գործարքն անվավեր ճանաչելու պահանջը կարող են ներկայացնել սույն օրենսգրքում նշված անձինք:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարքն անվավեր է, եթե օրենքը չի սահմանում, որ նման գործարքն առոչինչ է կամ չի նախատեսում խախտման այլ հետևանքներ:

3. ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԴԻՐՔՈՐՈՇՄԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքնչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան

ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա:

ՀՀ քաղաքացիական դատավարության 3-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենսգրքով սահմանված կարգով դիմելու դատարան՝ Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված **իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար**:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օրենքով նախատեսված դեպքերում այլ անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության համար դատարան դիմելու իրավունք ունեն օրենքով այդպիսի իրավունք կամ լիազորություն ունեցող անձինք:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 289-րդ հոդվածի համաձայն՝ գործարքները քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններն են, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանց դադարելուն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 290-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պայմանագիր կնքելու համար անհրաժեշտ է երկու կողմի (երկկողմ գործարք) կամ երեք ու ավելի կողմերի (բազմակողմ գործարք) համաձայնեցված կամքի արտահայտությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գրավի իրավունքը (այսուհետ՝ գրավը) գրավատուի գույքի նկատմամբ գրավառուի գույքային իրավունքն է, որը միաժամանակ միջոց է գրավառուի հանդեպ պարտապանի ունեցած դրամական կամ այլ պարտավորության կատարման ապահովման համար:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գրավը լրացուցիչ (ակցեսոր) պարտավորություն է գրավառուի (պարտատիրոջ) հանդեպ գրավատուի (պարտապանի) հիմնական պարտավորության կատարման ապահովման համար:

Դիմումատուի կողմից բարձրացված իրավական հարցի առնչությամբ ՀՀ սահմանադրական դատարանը դեռևս 2010 թվականի ՍԴՈ-906 որոշմամբ դիրքորոշում է հայտնել առ այն, որ բոլոր դեպքերում, ընդհանուր կանոնն այն է, որ դատարան դիմելու իրավունքը վերապահված է կոնկրետ այն անձին, ում իրավունքները խախտվել են կամ առկա է նրա իրավունքների խախտման վտանգ:

Նորմատիվ իրավական ակտերի մասին օրենքի 41-րդ հոդվածի համաձայն՝ Նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ

նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Ելնելով վերոնշյալ դրույթների համակարգային վերլուծությունից և դրանք համադրելով սույն դիմումի փաստական տվյալների հետ՝ կարող ենք անել հետևյալ հետևությունները: Նախ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածի սահմանադրականության առնչությամբ դիմումատուի ներկայացրած փաստարկները վիճելի են թվում, այն առումով, որ այդ հոդվածը ընդամենը նախատեսում է գործարքի անվավերության ընդհանուր հիմք՝ **օրենքի կամ այլ իրավական ակտի պահանջներին չհամապատասխանելը**:

Ինչ վերաբերում է գործարքների անվավերությանը և դրանք անվավեր ճանաչելու լիազորություն ունեցող սուբյեկտներին, ապա օրենսդիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ հոդվածի 1-ին մասով սահմանել է գործարքների անվավերության երկու ինքնուրույն ռեժիմներ: Մասնավորապես, այդ հոդվածի 1-ին մասի համաձայն գործարքն անվավեր է սույն օրենսգրքով սահմանված հիմքերով դատարանի կողմից այն այդպիսին ճանաչելու ուժով (**վիճահարույց գործարք**) կամ անկախ նման ճանաչումից (**առոչինչ գործարք**):

Վիճահարույց գործարքների անվավեր ճանաչելու իրավունք ունեցող սուբյեկտային կազմի մասով օրենսգիրքը սահմանում է, որ դրանք անվավեր ճանաչելու պահանջը կարող են ներկայացնել սույն օրենսգրքում նշված անձինք, ի տարբերություն առոչինչ գործարքի, որի անվավերության հետևանքների կիրառման մասին պահանջ ներկայացնելու իրավունքը օրենսդիրը վերապահել է ցանկացած շահագրգիռ անձի:

Վերադառնալով սույն գործի փաստական հանգամանքներին՝ նշենք, որ դիմումատուն դատարաններում փորձել է վիճարկել մի գործարքի անվավերություն, որի կողմ չի հանդիսացել և օրենսգրքի կարգավորումների ուժով չէր կարող նման լիազորություն ունենալ, քանի որ նման լիազորությունը վերապահվել է միայն **օրենսգրքում նշված անձանց,** որոնք էլ հանդիսանում են այդ գործարքի կողմերը: Ինչ վերաբերում է դիմումատուի կողմից կնքված գործարքին, ապա այն միտված է եղել Բանկի և Աիդա Գրիշայի Բատիկյանի միջև կնքված թիվ OVD1902948 վարկային պայմանագրով վերջինիս կողմից Բանկի առջև ստանձնած պարտավորությունների կատարման ապահովմանը և դիմումատուն իմացել և կանխատեսել է այդ պայմանագրից բխող իր համար բացասական հետևանքները:

Գործով դիմումատուն կարող էր բարձրացնել իր կողմից կնքված **գրավի պայմանագրի** անվավերության հարց, եթե գտնում էր, որ առկա է այդ պայմանագիրը անվավեր ճանաչելու՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված հիմքերից որևէ մեկը:

Ինչ վերաբերում է դիմումատուի կողմից վիճարկվող հոդվածների առնչությամբ օրենսդրական բացի խնդրին, ապա այդ հարցին ՀՀ սահմանադրական դատարանն արդեն իսկ 2019 թվականի ՍԴՈ-1476 որոշմամբ անդրադարձել է և որը վերլուծվել է նաև դիմումատուի կողմից Բարձր դատարան ներկայացված դիմումում: Կրկին չանդրադառնալով խնդրո առարկա որոշմամբ Բարձր դատարանի արտահայտած դիրքորոշումներին և հղում տալով մեր կողմից վերևում արված վերլուծություններին՝ գտնում ենք, որ սույն դիմումով բարձրացված հարցերի առնչությամբ առկա չէ օրենսդրական բաց:

Բացի այդ, առանձին քննարկման հարց է այն, թե ինչ ազդեցություն կունենար դիմումատուի գործողությունները վարկային պայմանագրի կողմ հանդիսացող Աիդա Գրիշայի Բատիկյանի վրա: Կամ արդյոք վերջինս ցանկանում է կամ կցանկանար, որ իր և Բանկի միջև կնքված վարկային պայմանագիրը անվավեր ճանաչվեր երրորդ անձի նախաձեռնությամբ:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ Կենտրոնը գտնում է, որ **Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 303-րդ հոդվածի 2-րդ մասը և 305-րդ հոդվածը համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը:**

Համակարգող՝ ***Ա.Ասատրյան***